1-877-328-9677

Ինչպե՞ս օգտագործել ձեր EBT Քարտը սննդեղեն գնելու համար

Գնում կատարելուց առաջ, ստուգեք ձեր հաշվեկշիռը՝ նայելով ձեր վերջին ստացականին կամ զանգահարելով Հանախորդի Սպասարկություն՝ 1-877-328-9677 անվճար համարով: Այդ հաշվեկշիռը կլինի այն առավելագույնը, որը կկարողանաք ծախսել ձեր քարտով:

Քայլ 1 Ընտրեք ձեր նպարեղենը և գնացեք վճարումի գիծ: Համաձայն վաճառատանը, հնարավոր է, որ դուք ձեր պայմանունակ սննդեղենը առանձնացնեք ոչ-պայմանունակ ապրանքներից:

Քայլ 2 Ձեր EBT Քարտը հանձնեք վաճառորդին կամ այն սահեցրեք Վաճառակետի (POS) կայանում:

Քայլ 3 Մուտքագրեք ձեր չորս թվանշանանոց Անձնական Ինքնության Համարը (PIN) ստեղնաշարի վրա: Կայանը ցույց կտա (****)՝ ձեր մուտքագրած թվանշանների փոխարեն:

Քայլ 4 Սեղմեք «Մուտքագրեք» (Enter) ստեղնը:

Քայլ 5 Վաճառորդը կմուտքագրի սննդադրոշմի գումարը և եթե դա ճիշտ է՝ դուք կսեղմեք «OK» կամ «ԱՅՈ» (YES) ստեղնը:

Քայլ 6 Դուք կստանաք պատճենը տպագիր ստացականի, որը ցույց կտա՝

- Վաճառատան անունը և հասցեն
- Ձեր կատարած գնումի գումարը
- Ձեր սննդադրոշմի հաշվի նոր հաշվեկշիռը

Քայլ 7 Պահե՛ք ձեր ստացականը, որպեսզի հաջորդ անգամ գնում կատարելիս իմանաք ձեր հաշվեկշիռը:

Ձեր սննդադրոշմի նպաստը օգտագործելու դեպքում, չպետք է որևէ վճար վճարեք:

Ինչպե՞ս ստուգել ձեր EBT Քարտի հաշվեկշիռը

Ձեր ընթացիկ հաշվեկշիռը տպագրված է ձեր վերջին ստացականի վրա: **Միշտ պահեք ձեր ստացականները:** Այսուհանդերձ, եթե կորցրել եք ձեր ստացականը, կարող եք զանգահարել Հաճախորդի Սպասարկություն կամ հարցնել վաճառատանը՝ թե կկարողանա՞ք ձեր հաշվեկշիռը ստուգել POS սարքից:

Եթե ձեր քարտը երբևէ կորած կամ գողացված է, անմիջապես անվճար զանգահարեք Հաճախորդի Սպասարկություն՝ 1-877-328-9677 համարով և նրանք ձեզ կասեն ինչպես ստանալ նոր քարտ: Եթե դուք ձեր քարտի կորած կամ գողացված լինելը չտեղեկագրեք, հնարավոր է, որ մեկ ուրիշը օգտագործի ձեր քարտը՝ ձեր բոլոր նպաստները ծախսելու համար, և այս նպաստները վերականգնելի չեն:

Անվճար զանգահարեք Հաճախորդի Սպասարկություն, եթե՝

- Ձեր քարտը կորած կամ գողացված է:
- Ձեր քարտը չի աշխատում:
- Ցանկանում եք փոխել ձեր PIN-ը, որովհետև մոռացել եք ձեր PIN-ը, կամ մեկ ուրիշն էլ գիտի ձեր PIN-ը: Ձեր հանրային օժանդակության գրասենյակը նույնպես կարող է ձեզ PIN-ը փոխելու խնդրում օգնել:
- Ցանկանում եք իմանալ, թե ինչքա՞ն է մնացել ձեր հաշվում:
- Ձեզանից գումար է գանձվել գնումի համար, բայց դուք ապրանքները չեք ստացել, կամ էլ ձեր գնումից շատ ավելին է գանձվել ձեզանից:
- Այլ հարցեր կամ խնդիրներ ունեք:

Օրը 24 ժամ/շաբաթը 7 օր

1-877-328-9677

TTY՝ 1-800-735-2929

Նայեք EBT-ի Ուսուցողական Գրքույկի ձեր աղյուսակին և մուտքագրեք օրը, որ նպաստները ձեր հաշվին պիտի տրամադրվեն:

(Ամսի առաջին օրից մինչև 10-րդ օրը)

USDA is an equal opportunity provider and employer.

State of California
Arnold Schwarzenegger, Governor
Health and Human Services Agency
Kimberly Belshé, Secretary
Department of Social Services

USDA is an equal opportunity provider and employer.